ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«26» հունիսի 2022 թվականի N: 334 - Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի N 253 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N: 1066-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման հանձնաժողովի գործունեության կարգի» 2-րդ կետը, Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի մարտի 13-ի N:2/25.1/8126, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի 2022 թվականի մայիսի 4-ի N:ՍԹ/4792-2022, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2022 թվականի մայիսի 23-ի N: 01/7441-2022, Ջրային կոմիտեի նախագահի 2022 թվականի մայիսի 24-ի N:01/15/1990-2022 գրություններով ներկայացված առաջարկությունները.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2018 թվականի նոյեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2009 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 230 կագադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N: 253 կարգադրությունը:

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2022 թվականի հունիսի 26 -ի №334-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ալբերտ Այվազյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ,
Զորիկ Խաչատրյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին- մարզային հողային պետական տեսչության պետ, հանձնաժողովի քարտուղար,
Ռոման Համայակյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ, հանձնաժողովի անդամ,
Արտակ Ֆարզադյան	«Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ, հանձնաժողովի անդամ,
Ռադիկ Չարխիֆալաքյան	«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գյուղատնտեսական հողերի նմուշառման, քարտեզագրման և լաբորատոր փորձաքննությունների բաժնի մարզային ագրոքիմիկոս, հանձնաժողովի անդամ,
Արամայիս Ղազարյան	«Շիրակ» ջրօգտագործողների ընկերության ավագ հիդրոտեխնիկ, հանձնաժողովի անդամ,
Սերգեյ Սարգսյան	Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանման ղեկավար, հանձնաժողովի անդամ,
Համապատասխան համայնքի ղեկավար	Հանձնաժողովի անդամ,
Համապատասխան համայնքի գյուղատնտեսության գծով մասնագետ	Հանձնաժողովի անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է